ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

22.02.2019Թ. ԿՆՔՎԱԾ N <<ԳՄՃՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/01>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Ճամբարակ <<02>>05 2019թ.

Ճամբարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Վ. Ա. Ադամյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<Տիգարելլ>> ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Ն. Արամյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղուսյակի 21-րդ տողի փոփոխությունը, 09.01.2019թ. կնքված N << **ԳՄՃՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/01**>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կանոնակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 22.02.2019թ. կնքված N << **ԳՄՃՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/01**>> գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված և կիրառված <<խոր.մ>> չափման միավորը փոխարինել <<կգ>> չափման միավորով՝ հիմք ընդունելով սեղմված բնական գազի 1 խորանարդ մետրի և 1 կիլոգրամի փոխհարաբերակցության՝ տեսությամբ ու գիտականորեն ընդունվող մեծությունը (1խմ=0.7001կգ), որը ներառված է գազի ծավալի ստուգաչափված էլեկտրոնային ճշտիչում: Խտության փոփոխության դեպքում կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 1 (մեկ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

«ԳՆՈՐԴ»	«ՎԱՃԱՌՈՂ»
Ճամբարակի համայնքապետարան	**«Տիգարելլ» ՍՊԸ**
ք. Ճամբարակ Գ.Նժդեհի 125	**ք.Ճամբարակ, Գ.Նժդեհի 2/5**
ՀՀ ՖՆ ԳՎ	**«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900182081225	**Հ/Հ 16023102091000**
ՀՎՀՀ 08621318	**ՀՎՀՀ 08616386**
Համայնքի ղեկավար՝	**Տնօրեն՝ Ն.Արամյան**
Վ. Ա. Ադամյան	
(ստորագրությունը)	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ.**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ճամբարակի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **սեղմված բնական գազի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԳՄՃՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/01>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2019 թվականի փետրվարի 22-ին** կնքված N << **ԳՄՃՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/01>>** պայմանագրում **2019 թվականի մայիսի 20-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքի չափման միավորը հանդիսանում է <<խոր.մ>>: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ապրանքի չափման միավորը փոխարինվել է <<կգ>>-ով:

Փոփոխության նկարագրություն: Գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված և կիրառված <<խոր.մ>> չափման միավորը փոխարինվել է <<կգ>> չափման միավորով՝ հիմք ընդունելով սեղմված բնական գազի 1 խորանարդ մետրի և 1 կիլոգրամի փոխհարաբերակցության՝ տեսությամբ ու գիտականորեն ընդունվող մեծությունը (1խմ=0.7001կգ), որը ներառված է գազի ծավալի ստուգաչափված էլեկտրոնային ճշտիչում:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ Հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղուսյակի 21-րդ տող:

Պատվիրատու՝ **Ճամբարակի համայնքապետարան**